

րութիւնը: Եւ հարկէ, ասում է լրագրիւր, ինչպէս կարելի է մի գործ կատարել, առանց պ. Ստասիւլէվիչի կամ պ. Կրասեվսկու հետ խորհուրդ տեսնելու:»

Մեծօղը նոյն է: Բայց մեծօղը գործ ղեկողները չեն նկատում թէ ծաղրելով անձնաւորութիւնները, որոնք առաջարկում են հասարակութեան հետ հասարակական հիմնարկութիւնների վրա խորհրդակցելու, ծաղրում են նոյն իսկ հասարակութիւնը:

Գ. Ա.

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՆԱՄԱԿ ԱՌԱՋԻՍԻՍԻՑ

19 օգոստոսի

Ամսոյս 18-ին տեղոյս հոգևոր կառավարութիւնը հաշտեցնելու և այլ անձանց ներկայութեամբ բաց անելով երեցփոխան վանքեանի գրասենակը սկսեց թուահամարել և վաւերացնել նրա մանր մուտք հաշիւը: Եւ ինչպէս որ յանձնէ հաշտեցնելին ընկնու համար: Այդ թղթերը այնքան շատ են որ հազիւ թէ մի քանի օրում հնար լինի վաւերացնել: Այդ թղթերի մէջ կային և զանազան տեսակ ճառեր, քէֆերի հաշիւներ և այլն: Մենք ևս ակնատես էինք այդ թղթերի վաւերացնելու ժամանակ և յոյս չուենք թէ պ. պ. հաշտեցնողը պէտք է կարողանան այդ խառն թղթերից մի բան դուրս բերել: Այժմ ինքնատիկեան հարց է ծագում. եթէ քաղաքիս մայր եկեղեցու գործերը այդ յուսանառ վիճակումն են որ բացի երեցփոխան ունենալուց, ունէր նաև երեցփոխանի գործերի վրա հսկող յանձնաժողով, հապա ինչ վիճակում պէտք է լինեն սրբոց վարդապետաց եկեղեցու գործերը, որը ոչ երեցփոխան ունի, ոչ էլ հաշտեցնող և յայտնի չէ թէ այդ եկեղեցու եկամուտը ո՞ւր գրպանն է լցվում և ինչ բանի վրա գործածվում... Այս բանը հոգևոր իշխանութեանը պաշտօնապէս յայտնի է, բայց թէ ինչու ոչ մի կարգադրութիւն չէ անում և անտարբեր լուծում է ի վնաս եկեղեցական շահերին: Փարք Աստուծոյ, որ վերջապէս քաղաքիս հայ հասարակութիւնը սթափեցաւ խոր քննից, և այժմ ինչպէս լսեցինք, սրբոց վարդապետաց եկեղեցու ժողովրդականքը պատրաստել են մի խնդիր, որով պէտք է խնդրեն հոգևոր իշխանութիւնից, կարծես ընդհանուր ժողով և ընտրել երեցփոխան յիշեալ եկեղեցու շահերը անկորուստ պահպանելու համար: Զոյս ունենք որ հոգևոր

նում մեր ժողովրդի այդ գործնական յոյսերն աւելի ակտիւնները և չեն էլ կարող լրացնել երբէք: Եթէ մի զանազանութիւն կայ արքունի ստորակարգ և հայկական դպրոցների մէջ, այդ էլ կայանում է նրանում որ արքունի ստորակարգ դպրոցները, իրանց աշակերտների հարկերից գտնէ 20-ին նախապատրաստում են միջնակարգ դպրոցներ (գիմնազիոն, բնական դպրոցներ և այլն) մասնաւոր հնչուութիւնով, այն ինչ մեր դպրոցները այդքանը ևս չեն կարողանում այժմ:

Այս բոլորը գիտենալով, ինչ պէտք է անելինք որ հայկական դպրոցները հետզհետէ ազգաստանալով չը փակվին:

Գրա համար հարկաւոր է գրաւել ժողովրդի համակրութիւնը: Իսկ ժողովրդի համակրութիւնը կարելի է գրաւել այն ժամանակ միայն, երբ մեր դպրոցները, գտնէ հոգևոր դպրոցները և դպրանոցները, ուսու լեզուի նկատմամբ, մրցէին արքունի պրոգիմնազիոնների հետ: Թող մեր միջնակարգ դպրոցները սորվեցնէին ուսու լեզուն այն չափով, որ չափով արքունի պրոգիմնազիոններն են սորվեցնում, այն ժամանակ, մեր զբարոցների վիճակը բոլորովին ապահոված կը լինէր առաջինը: Եւ երկրորդ, ժողովուրդը չը զրկվելով իր լեզուի կրօնի, պատմութեան, գրականութեան հիմնարար գիտութիւններից մի և նոյն ժամանակ ձեռք կը բերէր ուսու լեզուի գիտութիւնը այն չափով, որը տալիս է պրոգիմնազիոնը, գործնականապէս և տեսականապէս. և սրանով նրա գործնական ձգտումներին ըստ մեծի մասին, բաւարարութիւն կը լինէր:

Հարցը սրանումն է այժմ թէ ինչպէս անենք որ կարողանանք այդ կրկնա կի նպատակ

իշխանութիւնը կը յարգէ հասարակութեան խնդիրը և արժանաւոր կարգադրութիւնը կանէ:

Օտարական

ՆԱՄԱԿ ԽՄԲԱԳՐԻՆ

Աստրախան 10 օգոստոսի

Գնացած էի մի պատուաւ հոգևորականի տուն, նրա տոնավայրութեան օրը շնորհաւորելու դիմումով, որոյ մօտ արդէն խմբած էին բաւականին հայ երիտասարդներ նոյն նպատակաւ: Այս խումբը տեսնելով առաջարկեցի նրան որ իւրաքանչիւր ոք ըստ իր կարեաց չը զլանայ իր նուիրական պարտաւորութիւնը կատարելու, արկանելով իր նուէրը այն զանձանակի մէջ, որոյ բուն նպատակն է ազգի թշուառ վաւերաց մատակարարել մտաւորական և բարոյական զարգացումն:

Սկսան ստորագրութիւն բանալ, որից գոյացաւ յիսուն բուլլի (50 բ.) որը սրա հետ ուղարկելով ձեզ, յարգել խմբագիր. խնդրեմ հասուցանել «Միացեալ ընկերութեան» վարչութեանը, և ի միամտութիւն նուիրատուներին հրատարակել նրանց անունները Յ. Վ. Շ. 10 բ., братъя Морозовъ 3 բ., С. Асатуровъ 3 բ., Лазаревъ Сергѣй 3 բ., Խաչատուր Լալալեան 10 բ., Գեորգ Սարգսեան Ալապով 3 բ., Իսայ Պապաիով 5 բ., անյայտ ոմն 8 բ., Համբարձում Գուրումով 3 բ., անյայտ ոմն 2 բ., համագումարն է 50 բ.:

Յովհաննէս վարդ. Շիրակունի

ՆԱՄԱԿ ԽՄԲԱԳՐԻՆ

Ախալքսի, 20 օգոստոսի

Յարգելի խմբագիր. խնդրեմ երկուսդ նամակիս մի անկիւն չնորել ձեզ լրագրի էջերում: Շատերը զանազան քաղաքներից դիմում են ինձ նամակաւ, ուղարկել իրանց «Հայկական բարեգործական ընկերութեան» կանոնադրութիւնը, որպէս զի իրանք բանին ընկերութեան ճիւղերը, իրանց քաղաքներում, ուր մեծ հարկաւորութիւն է դրացվում, ինչպէս վերջին օրերս խմբագրութեան մէջ ևս յիշված էր: Եւ, անձնական տկարութեան պատճառով, չը կարողանալով մի առ մի անձամբ պատասխանել յարգելի պարոններին, որոնք ուղղել են ինձ այդպիսի պահանջ, աղաչում եմ բարեհաճեն լրագրի միջոցաւ ընդունել պատասխան՝ Շուշի, Ալեքսանդրապոլ, Երևան, Վաղարշապատ և Վարս (Համալսարանից դիմած):

Ընկերութեան կանոնադրութիւնը արդէն մաս

ն եր ին միանգամից ծառայելով, հասնել յառաջարկութեան իրագործութեանը:

Եւ ծխական դպրոցները երեք տարվայ դասընթաց (կուրս) ունեն:

Առաջին տարին ուսու լեզուն չէ դաս տրվում (լաւ կը լինէր որ երկրորդ տարին էլ առանց ուսուցիչի լինէր): Իսկ երկրորդ և երրորդ տարիներում դաս է տրվում: Երկրորդից վեր հոգևոր դպրոցներն են. սրանց դասընթացը տեւում է չորս տարի: Թողնում եմ թեմական դպրոցները որ պէտք է ունենան 6—7 տարվայ դասընթաց: Վերջինիցս երևում է որ հոգևոր դպրոցի դասընթացն աւարտելու համար հարկաւոր է 6 տարի, ենթացելով որ աշակերտը տարին մի դասարան կաւարտէ: Բոլոր տօներն ու արձակուրդները հանած, տարվայ մէջ աշակերտը մերձաւորապէս 150 ուսանելու օր ունի դպրոցում: Եւ նշանակում եմ օրական մի ժամ ուսու լեզուի համար: Ենթադրելով որ աշակերտը կարող է սովորել առաջին տարում օրական 6 արմատական բառ. երկրորդում՝ 10-ը. երրորդում՝ 14. չորրորդում՝ 18. հինգերորդում՝ 22. վեցերորդում՝ 26, կը հետևի որ առաջին տարվայ վերջում պէտք է իմանայ մտաւորապէս 900 բառ. երկրորդում 2400. (նախընթացի հետ). երրորդում 5000. չորրորդում 7700. հինգերորդում 11,000. վեցերորդում 14,900:

Եթէ բառերի այդ պաշարը, համաձայն թեքման, ածանցման և բաղդատման օրէնքներին սովորել է և գիտէ աշակերտը, այն ժամանակ նա միանգամայն ընդունակ կը լինի արտաբայել ազատօրէն իւր մտքերը թէ բանաւոր և թէ գրաւոր, նա ընդունակ կը լինի այդ լեզուի գրականութիւնից ազատօրէն օգուտ քա

նալի տակ է և մեծապատիւ Գ. Սունդուկեանցի եռանդուն աշխատութեամբ շուտով լոյս կը տեսնի: Սեպտեմբերի վերջերին յոյս ունենք յաջողվի մեզ ընդհանուր ժողով գումարել, ընտրել պաշտօնատար անձինք ընկերութեան կենտրոնը կազմելու: Թիֆլիսում և այն ժամանակ այդպիսի անձանուէր անձինք ընկերութեան գործին մեծ ծառայութիւն կարող են ցոյց տալ ընկերութեան ձեւերը բանալով զանազան քաղաքներում:

Իսկ այն յարգելի պարոններին որոնք խնդրում են ինձ գրել նոցա անդամ ընկերութեան, խնդրում եմ սպասել նոյնպէս մինչ ընկերութեան գործունէութեան սկսվելը:

Տարեկան վճարն է 5 բ. և յարմարութեան համար նպատակաւորմար կը լինէր եթէ իւրաքանչիւր ոք անդամակցէր իր «վիճակի» մէջ, ուր կը լինեն շտեղծական վարչութիւնը:

«Մեղուի» մէջ կարգացինք (որ և վաղուց յայտնի էր) թէ բնականաբար ուսումնարանի մի քանի խոհամիտ աշակերտներ մի գրադարան հիմնելու մտք ժողովել են 150 բ. և երեք հարկուր գիրք, որը այժմ նոյն ուսումնարանի ուսուցիչ պ. Գուսակեանի մօտ է: Ախալքսի թղթակից պարոն Կ. Ե. սորան աւելացնում է, որ նա չուէ է թէ այդ բոլորը պէտք է յանձնուի մի մասնաւոր անձի, մինչև որ միջոց լինի բանալու և թէ շատերը կարծում են որ կը գոցվի այդ միջոցով, ուստի աւելի լաւ կը լինի այդ գրքերը յանձնվեն այժմ հաստատուած «Հայկական բարեգործական ընկերութեան», որը գուցէ օգնէ շուտով բանալու: Թիֆլիսում միակ հայերէն ընթերցարան և ազատել այդ քանի աշակերտների քրտինքով հաւաքված գրքերը և փողերն:

Մենք բոլորովին համակրելով պ. Կ. Ե. առաջարկութեանը (թէ և չը գիտենք թէ ինչու մեծապատիւ պարոն Գուսակեանը ձեռնհաս չէ այդ գոյքը իր մօտ վետեղելու) խնդրում ենք նոցա, որոնցից կախված է այդ գումարի և գրքերի կարգադրութիւնը, բարեհաճեն տալ այդ, առ այժմ պարոն Գ. Սունդուկեանցին, ստանալով նրանից օրինաւոր ստացադր, իսկ պարոն Սունդուկեանցը, հաւատարմեք, քաղաքներում յանձն կաւնի ստանալ և բոլորը ամբողջապէս կը յանձնի ըստ պատկանելոյն, երբ կը կազմվի «Բարեգործական ընկերութեան» վարչութիւնը:

Բ. Նաւասարդեան

ՆԵՐՔԻՆ ԼՈՒԻՐԵՐ

Յօդուտ վիեննայի «Ժուրնալ դ'Օրիան» լրագրի ստացանք Նրեանեան քաղաքային բժիշկ Լեոն Տիգրանեանից 4 բուլլի, և թիֆլիսից Զակար Փիրա

ղելու, ինքնուրոյնաբար զարգանալու և այլն: Իմ հաշիւն ուղղի դուրս կը գալ, եթէ ուսու լեզուի ուսուցիչը լինի հմուտ առարկային և սորա աւանդելու եղանակին: Լինի և հմուտ հայոց լեզուի քերականութեան և ոգուն, որպէս զի դասախօսութիւնը լինի համեմատական, ուստի և արդաւաւոր: Այդ պահանջել է ուսու լեզուի ուսուցիչը, որպէս զի նա կարողանայ հետեւել հայ լեզուի ուսուցչին և ի դուր ժամանակ չը կորցնէ կրկնելու քերականական այն կանոններն ու բացատրութիւնները, որոնք բոլոր լեզուների համար ընդհանուր են. այլ ուսուցանէ այն, ինչ չ'ով որ ուսու լեզուն զանազան վուծ է հայկականից:

Այժմ համարեա թէ մեր բոլոր դպրոցներում ընդունվում են ծխականի առաջին մասնում 7—8 տարեկան անդադաղեա երեխաներ: Երեխան և հոգևոր դպրոցի դասընթացը տեւում է 7 տարի. ենթացելով իւրաքանչիւր տարի աշակերտը կաւարտէ մի դասարանի դասընթացը, կը հետևի որ 14—15 տարեկան հասակում աւարտած կը լինի նա իր ուսման ընթացքը: հոգևոր դպրոցում Եւ կարծում եմ որ շատ լաւ կը լինէր, եթէ աւարտողները միայն մի տարի ևս ուսումնարանում: Այդ միջոցին դրանց համար չէ բացվում 5—7 դասարան, ոչ այլ այդ միջոցում դրանց պէտք է ազատել սովորական դասերից և պարապեցնել ազատ ընթերցանութիւնով և գրաւոր աշխատութիւններով: Բոլոր լեզուի մէջ աւելի վարժելու համար պէտք է աւանդել 1) ուսուց պատմութիւնը (ուսուց լեզուով) 2) Բուսաստանի աշխարհագրութիւնը. 3) կարգացնել իրանց սովորած առարկաներին վերաբերեալ ուսանելի գրուածներ. 4) ծանո

լեանցից ու Արիստոտել Մեղրումեանցից իւրաքանչիւրից 4 բուլլ: Առաջվայ փողերի հետ կանի 58 բուլլ:

ՆԵՐՔԻՆ ԵՄԵՂ ԳՐՈՒԷՆ: «Պարզի» գիւղը, որ Երևանին մօտ է, չը կամեցաւ գիւղատէր Մէլք-Վարագեօզեանցին այս տարվայ բերքից մուշկը տալ: Ասում են որ նախնազական վարչութեան պաշտօնեաները սխալ կրպով են հասկացրել գիւղացիներին իրանց իրաւունքները և նրանք թելադրած լինելով այդ բացատրութեամբ ծեծելով դուրս են քշում իրանց միջից մուշկադարին և նրան պաշտպան եկած հաշտարար միջնորդին ու ոստիկաններին: Գաւառական հաշտարար դատաւոր Գուրգենից գրում է պոլիցիային թէ օգոստոսի 22-ին պէտք է քննէ պարզեցիկների գործը, ուստի պէտք է պոլիցիան հարկաւոր կարգադրութիւն անի ժամանակին: Փոխանակ օգոստոսի 22-ին, պոլիցիան կազմակերպելով, բերել է տալիս, առանց գործը քննված լինելու, օգոստոսի 2-ին, գիւղացիներից 24 մարդ և 4 կին և բանտարկում է նրանց: Ասում են որ գիւղում տղամարդ գրեթէ չը մնալով, նրանց հունձները բոլորովին փչանում են անտէրութեանց: Ինչի այդ մարդիկ չը քննված պիտի բանտարկվեն և 20 օր սպասեն հաշտարար դատաւորի քննութեանը: Իսկ եթէ նրանք ապացուցանեն որ նախնազական վարչութեան պաշտօնեաների սխալ բացատրութիւնից իրանց իրաւունքների մասին, նրանք զրկված են եղել այդպէս չարժեք, այն ժամանակ ինչով պիտի բաւականացնեն նրանց նիւթական կորուստը:

ԲԱԳՈՒԻՑ Ստացանք 5 բուլլի պ. Սամուէլ Սերգէյեանցից յօդուտ Հայաստանի սովետների:

Բացի 50 բուլլուց ստացանք Աստրախանից, Յով. վարդ. Շիրակունուց դարձեալ 25 բուլլ յօդուտ «Միացեալ ընկերութեան» որ գումարը նուիրել են հետեւալ անձինք: Կատարինէ Միւրայեան Պարպուկեանց 10 բ., Մարգարիտ Տէր-Գեորգեան Մաղաթեանց 10 բ. և Բաղդասար Տէր-Գեորգեան Պապուկեանց 5 բուլլ: Ընդամենը 25 բուլլ:

ՍՂՆԱԽԻՑ մեզ գրում են: «Ոգոստոսի 18-ին այստեղ վախճանվեցաւ մի 107 տարեկան պառաւ կին, որ մինչև իր վերջին օրերը առանց ակնոցների, որ իր կենանքում չէր գործ ածել, ասեղի միջով թիւ էր անցկացնում: Նա յաճախ կրկնելիս է եղել թէ՛ երանի մի տաքութիւն տայ ինձ, որ տեսնեմ թէ ինչ բան է հիւանդութիւնը, մանաւանդ որ ինձ տաքանալ է հարկաւոր, քանի որ փոքր ինչ մրտում եմ:»

Թացնել ուսու հեղինակների հետ, նրանց գործերը կարդացնելով, այս ամենի հետ պէտք է զուգընթացաբար գնայ և նմանօրինակ աշխատութիւնը, մայրենի լեզուով: Այդ աշխատութեան համար պէտք է նշանակել ուսու լեզուով պարպել շարժական 15 դաս. բ. հայ լեզ. նոյնպէս 15 դաս. դպրոցում, ուսու և հայ լեզուի ուսուցիչների առաջնորդութեան ներքոյ: Տնային պարապմունքը պէտք է թողել իրանց կամքին. բայց հարկաւոր է յորդորել որ կարդան լրագիրներ և ամսագիրներ, թէ հայերէն և թէ ուսուսերէն լեզուներով:

Այդ վերջինների ընտրութիւնը պէտք է լինի մանկավարժական խորհրդի ձեռքով:

Հարկաւոր ենք համարում ասել որ այդ վերջին պատ պարապմունքները, կամ թէ ասենք, լեզուի մէջ վարժելու տարին պէտք է լինի այն աշակերտների համար, որոնք ոչ կարողութիւն և ոչ էլ ցանկութիւն ունեն ուրիշ բարձր դպրոցներում իրանց ուսումը շարունակելու:

Գուցէ ընթերցողը հարցնէ թէ. աւելի լաւ չէր լինել, եթէ օրական մի ժամ նշանակուած ուսու լեզուի հետ, հոգևոր դպրոցների առաջին կամ երկրորդ դասարաններից սկսէինք ուսու լեզուով դաս տալ առարկաներից մի քանիսը և վերջին տարվայ այդ լեզուավարժական պարապմունքները տեղի չունենային այլ ևս: Այդ մասին եթէ հարց լինի, ես իմ պատասխանը չեմ ուշացնել:

Առ այժմ այսքանը կարծում եմ՝ ես ասացի այն, ինչ որ մեր ժողովրդին քաջում է դէպի ուսուց դպրոցները:

Ս. Բէգ-Նազարեանց

Մեզ գրում են Սոփիանց որ մինչև օգոստոսի 1-ը Սոփիանց փոստը ստացվում էր թիֆլիսից կիրակի և չորեքշաբթի օրերը, իսկ այնուհետև փոստի գալու կարգը փոխվեցաւ և այժմ փոխանակ կիրակի շաբաթ օրերն է ստացվում: Բայց սոփիանցիները շաբաթ օրերը թիֆլիսից ոչ մի լրագիր չեն ստանում, այլ բոլորը ի միասին, դարձեալ չորեքշաբթի օրն են ստանում:

ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ԱՆՔԻՒՄ

Լրագիրները հաղորդում են հետևեալը: Օգոստոսի 15-ին համայնքների ժողովի մէջ սաստիկ վրդովմունք էր տիրում: Նիստի բացվելուց դեռ շատ առաջ դահլիճը և սրբոցնները լի էին պատգամաւորներով և հանդիսականներով: Վարդստոն պէտք է հաղորդէր համայնքների ժողովին կառավարութեան վճիռը այն խմբագրութիւնների մասին, որոնց մոտեցրեց լորդերի ժողովը կալուածական նոր օրէնքի մէջ: Պարլամենտի առաջ հաւաքված բաղմամբ ամբողջ «կեց-ցէներով» ընդունեց առաջին միութարին: Նոյնպիսի ընդունելութիւն նա գտաւ ազատամիտների կողմից համայնքների ժողովի դահլիճը մտնելու ժամանակ: Ժողովի ժամանակ մի քանի խորագրեր կարդացվեցան, որոնք պահանջում էին նոր օրէնքի մէջ լորդերի ժողովից մտցրած խմբագրութիւնները մերժելու: Օկլիլի յայտնեց, որ հետևեալ նիստին նա մտադիր է հարցնել կառավարութեան, արդեօք յայտնի է կառավարութեանը 1848 թուականի օրէնքը, որով լորդերի ժողովը պէտք է ոչնչանայ և արդեօք Վարդստոն մտադիր չէ այդ օրէնքը նորից ենթարկել համայնքների ժողովի հաստատմանը: Վարդստոն առաջարկեց քննել այն պատճառները, որոնք դրդեցին լորդերի ժողովին մերժել օրէնքը այն ձևով, որով հաստատված էր համայնքների ժողովից: Պարնել հարցրեց արդեօք կը յայտնի Վարդստոն իր դիտաւորութիւնները վիճաբանութիւններից առաջ: Առաջին միութարորը բացասական պատասխան տուեց, ասելով, թէ կառավարութիւնը լճուկ է սկզբնական մեկնութիւններ չը տալ: Երկրորդացիները և արմատականներից շատերը անբաւականութիւն յայտնեցին, ասելով, թէ կառավարութիւնը կատարելապէս հպատակվում է լորդերի ժողովին: Համայնքների ժողովը համաձայնութիւն յայտնեց քննել լորդերի ժողովի առաջարկած խմբագրութիւնները: Այդ խմբագրութիւններից մի քանիսը ընդունվեցան կառավարութեան, մի քանիսը ուղղվեցան և մի քանիսը մերժվեցան: Համայնքների ժողովը ընդունեց կառավարութեան վճիռները և առաջարկութիւնները մասամբ առանց քուէարկութեան և մասամբ ձայների նշանաւոր մեծամասնութեամբ: Պարնելի կուսակցութիւնը աշխատում էր, որ լորդերին ոչինչ զիջումն չը լինի, բայց այդ կուսակցութիւնը յաղթվեցաւ ձայների նշանաւոր մեծամասնութեամբ: Պարնել խիստ յարձակմունքներով դատապարտում էր Վարդստոնին և նրա յայտնութիւնները «անհաւատարմ» անուանեց: Իրա համար նա կարգի հրաւիրեցաւ: Երկրորդացիները յայտնեցին, որ կառավարութիւնը յաղթված է լորդերի ժողովից: Վերջը մի մասնաժողով ընտրվեցաւ, որ պէտք է յայտնէր լորդերին համայնքներին ժողովի վճիռը:

ՅԲԱՆՍԻԱ

Լրագիրների մէջ կարդում ենք հետևեալը: Այսօր, օգոստոսի 21-ին, Ֆրանսիայում

կատարվում են պարլամենտական ընտրութիւններ: Ընտրողական ցուցերը մի քանի բացառութեամբ խաղող բնաւորութիւն ունենին: Ֆրանսիան իր առաջն ունի երկու զինուոր նախագծեր, մէկը Վամբետայի և նրա կողմնակիցների, իսկ միւսը Վլեմանսօի: Մնացած կուսակցութիւններից ոչ մէկը այնպիսի մի նշանաւոր նախագիծ չը յայտնեց, որի աջողութիւնը կարելի լինէր ենթադրել: Պահպանողականներից շատերը հրաժարվեցան մրցելուց, իսկ նրանք, որ առաջնորդում են հանրապետականների միացորդ հակառակորդներին, իրանք իրանց զործը անյուսալի են համարում: Անկասկած է, որ արմատականներն էլ, որոնց բանոր դասը աւելի է համակրում, մեծամասնութիւն չեն կազմի պատգամաւորների ապագայ ժողովում, որի մէջ կշիռ կունենան չափաւոր հանրապետականները և Վամբետայի նախագիծը կուսակիցները:

Ֆրանսիական պարլամենտական այժմեան ընտրութիւնները շատ քիչ են նմանում 1877 թուականների ընտրութիւններին, երբ հարցը հանրապետական կառավարչական ձևի մասին էր: Զետտիմութիւնը այն ժամանակ կատարեալ էր: Բրոյի-Ֆուրտույի միութարութիւնը բոլոր ջանքերը դրած էր դնում, որպէս զի աւելի պահպանողական ժողով ընտրվի, քան թէ մարշալ Մակ-Մա-հօնի արձակած «363» մեծամասնութիւնը: «Բարոյական կարգապահութեան» կուսակցութիւնը ոտքի կանգնեցրեց իր վարչական և պոլիցիական բոլոր ոյժերը: Նա անընդհատ և խստութեամբ հաղածում էր ընդդիմադրական կուսակցութեանը, ենթադրելով, որ մամուլը խիստ պատիժների և փորձեց բանտարկել նոյն իսկ հանրապետականների առաջնորդ Վամբետային, պատճառելով, իբր թէ նա հրապարակապէս վիրաւորել էր հանրապետութեան նախագահին: Այնուամենայնիւ պահպանողականների դործ դրած եռանդոտ բոլոր միջոցները ի դուր անցան: «363» — ի երևելի մեծամասնութիւնը նորից ընտրվեցաւ և Վամբետայ, որին հանրապետականները զինուորապէս պարտական էին իրանց յաղթութեամբ, առաջին մարդը դարձաւ Ֆրանսիայի մէջ: Մարշալ Մակ-Մահօն ստիպված էր յետ կանգնել և այդպիսով ներքին պատերազմին և անբաւականութիւններին վերջ դրվեցաւ, մեծ բաւականութիւն պատճառելով հասարակութեանը: Այժմ առաջվայ վտանգները և դժուարութիւնները ոչնչացրած են: Ընտրութիւնները կատարվում են բնական պայմաններով շրջապատված, առանց որ և է ճիշդման կառավարութեան կողմից: Ընտրողները ոչ մի նշանաւոր և անմիջական խնդիր չը պէտք է լուծեն, այնպէս որ ազգաբնակչութիւնը մինչև անգամ անտարբեր է վերաբերվում ընտրութիւններին: Նոյնպէս և ամբողջ Եւրոպայի համար Ֆրանսիական պատգամաւորների այժմեան ընտրութիւնները քաղաքական մեծ նշանակութիւն չեն կարող ունենալ, որովհետև առաջուց յայտնի է, որ պատգամաւորների ապագայ ժողովը նոյնքան խաղաղասեր ընաւորութիւն կունենայ, որքան և նախկին ժողովը:

Փարիզի մէջ ամենքի խօսակցութեան առարկայ են դարձել այն անկարգութիւնները, որոնք պատահեցան Բելլիլի մէջ: Այդ շրջանը ամբողջ Ֆրանսիայի մէջ ամենաարմատական է համարվում, բայց այնուամենայնիւ ոչ ոք չէր կարծում, որ Վամբետային թոյլ չեն տայ խօսել «République Française» Լրագիրը մասնացրեց է ինքուր կարգապահութիւնը խանգարողների

անկայել վարմունքի վրա և ապացուցանում է անհաշտների երկչոտութիւնը և վատութիւնը: Մինչև անգամ արմատական լրագիրները յարձակվում են խօսքի ազատութիւնը այդ ձևով չը յարգելու վրա: Վամբետայի հակառակորդ Վլեմանսօի «Justice» լրագիրը նկատում է, որ 1869 թուականին Բելլիլիցները կը ջարդէին Վամբետային այդպիսի ընդդիմադրութիւն դործող մարդկերանց: Բայց սօցիալիստները և անհաշտները չափազանց ուրախ են: Բոչֆօր իր «Intransigent» լրագրի մէջ նշկատում է, «զործը սկսվեցաւ, այսուհետև Վամբետայ կարող է միայն դահլիճների պատգամաւոր լինել»: Բելլիլը, հասկանալով, որ նա պատրաստում է մեզ ոչնչացնել, նրան ոչնչացրեց և պատժեց: «Français» լրագիրը կարծում է, որ Վամբետայ կընտրվի Բելլիլի շրջանի մէջ, բայց որ նրա ազդեցութիւնը անզորացրած է: «Journal des Débats» լրագրի կարծիքով Վամբետայի պէս նշանաւոր քաղաքական դործիչ պէտք է չառաջարկէր իր կանգիդատուրան Բելլիլին, որ Ֆրանսիայի ընտրողական շրջաններից ամենաարմատականն է:

ԽԱՌՆ ԼՈՒՐԵՐ

«La Nature» լրագիրը իր համարներից մինի մէջ տպել է հետևեալ հետաքրքիր թւանշանները: Երկրագնդի վրա բնակվող մարդիկ խօսում են 2,523 բարբառներով, այդ բարբառներից 587 եւրոպական են, 396 ասիական, 376 աֆրիկական և 1,264 ամերիկական: Աշխարհի երեսին կան 1,000 այլ և այլ կրօններ: Տղամարդկանց և կանանց թիւը երկրագնդի վրա գրեթէ հաւասար է: Դնվող երեխաների ամբողջ գումարից մի երրորդականը միայն ապրում է մինչև 7 տարեկան հասակը և կէսը մինչև 17 տարեկան հասակը: Հազար մարդու վրա հաշւում են մի 100 տարեկան և երկու 80 տարեկան ծերեր: Հարիւր հոգու վրա հաշւում են վեց 60 տարեկան ծերեր: Երկրագնդի վրա բնակվում են մոտաւորապէս մի միլիարդ բնակիչներ: Իւրաքանչիւր տարի մեռնում են միջին թւով 333 միլիոն հոգի, ուրեմն իւրաքանչիւր րոպէ 60 մարդ են մեռնում, այնինքն իւրաքանչիւր վայրկեան մի մարդ է մեռնում: Դնվողներ թիւը գրեթէ լրացնում և հաւասարակշռում մեռածների թիւը:

Նորերումս «Փոնշ» լրագրում տպվեցաւ և «Մասիս» մէջ արտատպվեցաւ Բերլինի երեւելի հայագետ Ջախտաւ պրոֆէսորի յօդուածը հայոց գրաբար և աշխարհաբար լեզուներով վրա: Բարգելի պրոֆէսորը նոյն միտքն է յայտնում, ինչ որ յայտնել է «Հիստորիայը» և ինչ որ յայտնում էր «Մշակը» թէ գրաբար լեզուն անհնարին է կենդանացնել, քանի որ նա մեռած լեզու է, իսկ նրանից կարելի է միայն արմատներ փոխ առնել, իսկ մեռած լեզուից անհնար է փոխ առնել քերականական ձևերը: Առհասարակ յօդուածը այնքան հետաքրքիր է, որ մենք կաշխատենք արտատպել նրան «Մշակի» մէջ:

Սանդվիչեան կղզիների թագաւոր Կալուուան, բացի թագ կրելուց և շօնօրուրի մէջ հրատարակվող լրագրի խմբագրի պաշտօն է վարում: Լրագրի խմբագրական նախ խմբագրութիւնները տպել է տպիս լրագրի ֆէլիստոնում:

Մադրասի տեղական, պաշտօնական թերթը հաղորդում է օրիորդ Պոգոնի նշանակութեան մասին իբրև միտքօրոգիական կորեսպոնդենտ: Օրիորդը շատ տարիներ վարել էր գննող աստղաբանի օգնականի պաշտօն և ուրեմն հմուտ է այդ նոր պաշտօնի մէջ:

Մոտ օրերս Բուխարեստում քննվում էր մի շատ հետաքրքիր դատ. Գեներալ Կորնեսկոյի կինը գանգաւորվում էր իր մարդու դէմ որ նա, չը նայելով իր տկարութեան, չը թոյլ տուեց գնալ ջրեր բռնկվելու, թէպէտ երեք բռնկական վկայու-

թիւներ ցուց տուեց որ ինքն բարակացաւ ունի և բռնկվելու համար հարկաւոր են Գենյիսիները: Ջրերը: Տիկինը խնդրում էր դատաստանին ստիպել իր մարդուն տալ իրան 3000 մարկ, որ կարողանայ գնալ բռնկվելու: Տիկին Կորնեսկոյ յայտնեց որ նա 1000 դուկատ տարեկան եկամուտ է տուել մարդուն իր բերած օժիտից և այդ պատճառով կարծում է իրաւունք ունի խնդրել այդ չնչին գումարը իր առողջութեան համար: Գեներալ Կորնեսկոյ յայտնեց որ այդ օժիտը չէ ստացել իր աներոջից, թէպէտ նա խոստացած էր և այդ պատճառով, չունենալով ոչինչ միջոցներ, հրաժարվում է ուղարկել կնոջը ջրեր, ինչքան էլ թանգ է իրան կնոջ առողջութիւնը: Երկար վիճարանելուց վերջը դատարանը վճռեց որ տիկին Կորնեսկոյ ունի իրաւունք փոխ առնել 2000 մարկ իր օժիտի ապագայ եկամուտի հաշուով:

«ՄՇԱԿԻ» ՀԵՌԱԳԻՐՆԵՐ

ՄԻՋԱԶԳԱՑԻՆ ԸՆԿԵՐՈՒԹԵՆԻՑ
Ս. ՊԵՏԵՐԲՈՒՐԳ, 21 օգոստոսի: «Прав. Вѣстн.» լրագիրը հաղորդում է. Մեծ Իշխան Միխայիլ Նիկոլայիվիչ, Մեծ Իշխան Նուհի Օրդա Ֆեօդօրօվիչ և Մեծ Իշխան Միխայիլ Միխայլօվիչ օգոստոսի 20-ին ուղևորվեցին Վարշավեան երկաթուղու փոստային գնացքով արտասահման, Եյդկու-նենից անցնելով, Բելլին: Դովային բաժնին տուած հրամանով նաւատորմի գլխավոր բժիշկ Բուժ հիւանդութեան պատճառով արձակված է ծառայութենից:

Ս. ՊԵՏԵՐԲՈՒՐԳ, 22 օգոստոսի: «Новое Время» լրագիրը հաղորդում է, որ շուտով կոչնչացվին Օրդեսայի և Ֆիկանդայի զինուորական շրջանները և բաւական կը սահմանափակվին շտաբեր Կովկասեան զինուորական շրջանի մէջ: Այն դորբերը, որոնք հաշւում են Օրդեսայի զինուորական շրջանի մէջ մտնող նահանգների մէջ, կը միանան Կիևի և խարկովի զինուորական շրջաններին դորբերի հետ: Վերջինի հետ կը միանան այն դորբերը որոնք գտնվում են Կովկասեան սարիցի դէպի հիւսիս եղած նահանգների և շրջանների մէջ: «Русский Инвалид» լրագիրը հաղորդում է, որ Մեծ Իշխան Նիկոլայ Նիկոլայիվիչ Աւագ օգոստոսի 22-ին ուղևորվեցաւ Ս. Պետերբուրգից այն դորբերին այցելելու համար, որոնք բանակ ունեն Մօսկվայի, Կիևի, Օրդեսայի, Բենդերի և Նիսավիտոգրադի մօտ:

ԿՐՈՆՇՏԱՏ, 22 օգոստոսի: Այսօր Նորին Բարձրութիւն Կոնստանտին Նիկոլայիվիչի յօրելեանի պատճառով փառաւոր հանդէս տեղի ունեցաւ Կրօնշտատի մէջ: Նոյնպիսի հանդէս կայացաւ Պավլօվսկի մէջ ի պատիւ Խրիլիարի Ամուսին: Բարեկեանի առիթով նաւատորմի մէջ ծառայողներից հետևեալ անձինք արժանացան Բարձրագոյն ընծաների: Կօզակիվիչ, Պետրիչ, Եանիվիչ, Եանիվսկի, Կօզնակով 1-ին, Կոմս Լիսկէ 2-դ և բարձն Բոյէ:

Ս. ՊԵՏԵՐԲՈՒՐԳ, 21 օգոստոսի: Պետական բանկի 50% տոմսակր առաջին շրջանի արժէ 96 ռ. 50 կ., երկրորդ 94 ռ. 50 կ., երրորդ 94 ռ. 78 1/2 կ., չորրորդ 94 ռ. 50 կ., ներքին 50% առաջին փոխառութեան տոմսակր արժէ 229 ռ. 25 կ., երկրորդ 225 ռ. 25 կ., երրորդ 1 ռ. 1օնգօնի վրա արժէ 25,87 պէնս, ուստաց 100 ռ. Համբուրգի վրա արժէ 221 մարկ 50 պֆ., ֆարիզի վրա արժէ 273 ֆրանկ: Բօրայի տրամադրութիւնը հանգիստ է:

«ՄՇԱԿԻ» ՊԱՏԱՍԽԱՆՆԵՐ
—ԿԻՍԼՈՎՕԿՍԿԻ. Շ. Մայիսի 1-ից մինչև յունվարի 1 «Մշակը» արժէ 8 րուր:
—ԿԱՐԱՍՈՒԲԱԶԱՐ. Պ. Լրագիրը ձեռք կուղարկենք:
Խմբագիր—հրատարակող ԳՐԻԳՈՐ ԱՐԾՐՈՒՆԻ

Յ Ե Յ Տ Ա Ր Ա Ր Ո Ւ Թ Ի Ի Ն Ն Ե Ր

144 Արժուճու գաղթէա 144
ամենախճան պահեստ
մերէի և հայելիներէ:

**ՔՐԻՍՏՈՆԵՈՒԹԻՒՆԸ ՎԵՐԱ-
ԿԱՆԳՆՈՂ ԸՆԿԵՐՈՒԹԵԱՆ
ԽՈՐՀՈՐԴԻ ԳՐԱՍԵՆՆԱԿԸ**
յայտնում է, որ օգոստոսի 28-ին ընկերու-
թեան բնակարանի մէջ Գանձակայա փողո-
ցի վրա Մանտաշեկի տանը լինելու է վերջ-
նական բերանացի աճուրդ կապալով տարու-
համար մի տարի ժամանակով 9,000 դե-
սետարն Շեխիլիսկի և Սալազլիսկի արօ-
տառողիները, որ գտնվում է Կարայազի կա-
լուածքի երկրորդ բաժնի մէջ: Մանրամաս-
ները կարելի է իմանալ Թիֆլիսում խոր-
հորդի գրասենեակում և Կարայազում կա-
լուածքը կառավարող գրասենեակի մէջ:
1—1

**ԳԱՆԱԿՈՒԹԵԱՄԲ ՎԱՃԱ-
ՌԵԼՈՒ** համար ստացված է ՕՂԻ
ՇՏՐԻՏՏԵՐԻ, արտասահմանի գանազան
ԿՕՆՍԵՐՎՆԵՐ և ԽՄԻԶՔՆԵՐ
և ՎԱԿՍԱՍ. «Ժակօ»: Գնորը չափաւոր
են: Գործակալական պահեստի մէջ, Արժու-
նու թատրոնի տակ բախում: 3—3

**Ա. ՊՐԻԴՈՆՈՎԻ և Ի. ՇԱԽ-
ՆԱԶԱՐՈՎԻ ԲԱՆԿԱՅԻՆ ԳՐԱ-
ՍԵՆՆԱԿԸ** սերգիսկայու փողոց պե-
տական բանկի բաժնի դրամը:
Գնում է և ծախում է % ԹՂԹԵՐ,
ՓՈՒԱՆՑՔՆԵՐ և անում Ա. Պետեր-
բուրգ, Մոսկիա և Օդեսա, նոյնպէս և Ֆրանս-
սիա, Անգլիա և Աւստրիա:

ԱՊՍՆՈՎՈՒՄԷ ներքին 1 և 2
փոխառութեան տոմսներ հանգչելուց 50
կ.: Օտարաքաղաքացիները գրասենեակը
խնդրում են ուղարկել **ԱՆՀՐԱԺԵՇՏ
ԴՐԱՄԸ** փաստային ծախսի և դրոշմելու
մարկաների համար իւրաքանչիւր ապահո-
վագրի համար 10 կոպէկ: 3—3

ՀԱՅՈՑ ԼԵԶՈՒԻ ՈՒՍՈՒՑԻԶ
անունով ՄԵՐ ԵՐՐՈՐԴ ՏԱՐՈՒԱՅ
դասագիրքը լոյս տեսաւ և ծախվում է
Կովկասեան ու Կենտրոնական գրադաճա-
նանցներում:
Գինն է 40 կօպէկ:

Իսկ ով ցանկանում է հատը 35 կոպէ-
կով ձեռք բերել, գինը **ԿԱՆԻՍԻԿ** վճա-
րելով և ճանապարհահաճախսը իր վրա
առնելով:

Թող գիտէ մեզ հետեւեալ հասցեով.
„Въ Тифлисъ.— На Авлабаръ. И-
вану Петровичу Назарьянцъ.“

**ԾԱԽՎՈՒՄ ԵՆ 30% ԷԺԱՆ
ՔԱՆ ԹԷ ՈՒՐԻՇ ՏԵՂ.** մուրա-
նէր, կոնֆեկանէր, **ԿԱԿԱՍ**, բրինձ, Ա-
ՄԱՆԱԿԵՆ, բոկալներ, թասեր, երես լուա-
նալու ամաններ, չայնիներ, ԲԱԺԱԿՆԵՐ,
կերակրի ամաններ (судеи), մատուցարան-
ներ, ԿՈՂՊԷՔՆԵՐ, ԴԱՆԱԿՆԵՐ, գզալներ,
ԳՐԻՉՆԵՐ, թուղթ, մատիտներ, տետրակ-
ներ, ՀՐԱՑԱՆՆԵՐ, ՐԷՎՈԼՎԵՐՆԵՐ, այբու-
նէր, ՄԱՀԱԿԱԿԱՆՆԵՐ, ՀԱԳՈՒՍՏ, տրիկօ, պա-
րուսին, թաշկինակներ, երեսբրիներ, կլեմ-
կա, գուլբաններ, ԹԱՄԲԵՐ, ՊՕՐՏ-ՎԷՑԵՆ, խե-
րես, կոնեակ և այլն: Թէ՛ մեծ քանակու-
թեամբ ՎԱՃԱՌԱԿԱՆՆԵՐԻ համար ՊՈՒԴԸ
44 ռ., 46 ռ., 48 ռ., 50 ռ., 52 ռ., 54
ռ., և այլն: Այդ բոլորը կարելի է գտնել
ԱՆԳԼԻԱԿԱՆ ԽԱՆՈՒԹԻ ՄԷԶ:

Մի և նոյն տեղը էժան գնով. ՇԵՐԲԵՏ մա-
հնգիա, խմոր ծԱՐԱԻԻ դէմ, ԽԻՆԱՑԻ գի-
նի ջերմի դէմ, կարթուան ՓՕՇԻ, հեղուկ
և ՍԱՊՈՆ, բժշկական թուղթ փառերկրոգե-
տի համար, պարկական փոշի: 56—100

**Ա. Ղ. ԷՆ ԺԱԽՎՈՒՄ Է
„ՀԱՅՈՑ ԼԵԶՈՒԻ ՈՒՍՈՒՑԻԶ“**
Անունով մեր **ԶՈՐՐՈՐԴ** տարուայ
դասագիրքը Կենտրոնական և Կովկասեան
գրադաճարաններում:

Գինն է 60 կոպէկ
Գումարով առնողներին գինը կը լինի:
Իսկ ով ցանկանում է հատը 55 կոպէ-
կով ձեռք բերել, գինը **ԿԱՆԻՍԻԿ** վճա-
րելով և ճանապարհահաճախսը իր վրա
առնելով. **Въ Тифлисъ.— На Авлабаръ. И-
вану Петровичу Назарьянцъ.**

Յ. ՆԱԶԱՐԵԱՆԿ
8—25

**Въ Редакции газеты
„МШАКЪ“**

**Продается
„ЭКОНОМИЧЕСКОЕ ПОЛОЖЕНИЕ
ТУРЕЦКИХЪ АРМЯНЪ.“**
Д. Григория АРЦРУНИ.

Брошюра напечатана въ Москвѣ.

Цѣна 25 коп.

**Մ. ՎԱՐԴԱՆԵԱՆՑԻ ԵՒ ԸՆԿ.
Ն Ո Ր Տ Պ Ա Ր Ա Ն Ը**

Տեղափոխվեցաւ Գաւօժակայա փո-
ղոցի աւելի յարմարաւոր տեղ, այն է՝
ՏՐՕՑԻՑԻ փողոցը № 11. Գոստատան
ետեի քուչան: Ընդունվում են ամեն լի-
զուով և ամեն տեսակ պատուէրներ ամե-
նամատչելի գներով:
Նոյն տպարանում ընդունվում են և պա-
տուէրներ ՊԱՏԿԵՐՆԵՐԻ ՓՈՐԱԳՐՈՒԹԵԱՆ
տպագրութեան համար փայտի և պղնձի
վրա:

„Խ Ե Ն Թ Ը“
ԱՐԿԱՍՆԵՐ ՎԵՐՋԻՆ ՌՈՒՍ-ՌՈՒՐԲԱԿԱՆ
ՊԱՏԵՐԱՋՄՈՑ Հեղինակութիւն ՐԱՑՅԻԻ

Տպագծ մաքուր թղթի վրա, գիրքը բաղ-
կանում 400 երեսից: Թիֆլիսում ծախվում է
„Մշակի“ խմբագրատանը, „Կենտրոնական
գրադաճարանում“, „Կովկասեան գրա-
վաճարանում“ պ. Զաքարիա Գրիգորեան-
ցի մօտ, և պ. պ. Շահինեանցի, Բազար-
ջեանցի, Հովսեփեանցի ծխախոտի մագաղին-
ներում:

Գինն է 1 ռուբլ 20 կոպ:

Մամուլի տակն է և շուտով լոյս կը տեսնի իմ թարգմանած՝ **ՄԱՅ-
ՐԱԿԱՆ ԴԱՍՏԻԱՐԱԿՈՒԹԻՒՆԸ ԲՆՈՒԹԵԱՆ ՕՐԻՆԱՅ
ՎՐԱ ՀԻՄՆՈՒՄԸ**՝ հեղինակութիւն Ժ. Բամբուսի: Ուստի զիմեյով
այն յարգելի բարեկամացս, որոնք բաժանորդներ գտնելու ներդրելու յանձն
էին առել, խոնարհաբար խնդրում եմ, որմինչև օգոստոսի վերջը բարեհաճին
յանձնել ինձ բաժանորդութիւնը, որպէս զի կարողանամ աւարտել գրքիս
տպագրութիւնը առաջիկայ սեպտեմբերին:

Գրիգոր Շահբազադեանց

Կերականգինեայ **ՄԱԿ-ՄԱՍ-
ՏԵՐ**, մաղերը ամրացնող և նրանց
ԲԱԿԱՆ ԳՈՑՆԸ վերադա-
նող: Գինը 2 ռ. շէշը, **ՓՈՍՍԱ-
ՅՈՎ** ուղարկված 2 ռ. 49 կոպ.
ԱՆԳԼԻԱԿԱՆ խանութի մէջ



Մի և նոյն տեղը **ԽԻՆԱՑԻ
ԻԿՂ**, մաղերը ամրացնելու հա-
մար, 1 ռ. ամանը՝ վրձին գլխա-
ցաւի դէմ, **ՏՈՒԱԼԷՏԻ ՍԱ-
ՊՕՆ** և հոտաւէտ ջրեր և այլն:
17—100

1880 թուից **ԹԻՓԼԵՍՈՒՄ** բացվել են պանսիօն և կրկնա-
կան դասատուներ, քաղաքային և զինուորական զինագիւմնե-
րի և ընտանեկան ուսումնարանի աշակերտների համար, և ուսու-
մնարան երեխաներին պատրաստելու միջնակարգ դպրոցների
համար: Գաղեական, Գերմանական լեզուների և երաժշտու-
թեան վարժութիւնը աւանդվում է գործնականապէս:

Երեխաներին ընդունում են ամբողջ տարի, ամենայն օր
8-ից մինչև 2 ժամ:

Մի քայէլեան կամուրջ, Կիկոյայեվսկի փողոցի անկիւնում,
իշխանուհի Գրուզինսկու տանը № 21, որտեղ բովանդակվում
է երրորդ բաժնի Հաշտարար դատարանը:

3—3 **Բ. ԲԵՑՕԼԻ:**

ՄԱՆԿԱԿԱՆ ՊԱՐՏԵԶ

ՏԱՐՐԱԿԱՆ ՈՒՍՈՒՄ ՆԱՐԱՆՈՒՄ

Ընդունելութիւնները սկսվում են օգոստոսի 20-ից, իսկ ուսումը սեպտեմբերի
1-ից: Մանկական պարտէզի մէջ ընդունվում են մինչև 7 տարեկան երեխաներ, իսկ
«Տարրական ուսումնարանում» մինչև 13 տարեկանները:
Իշխան Ն. Ամատունու տուն, Վելիամինովսկի փողոցի վերայ:

Բ. Միրմանեանց

**ПРИСЯЖНЫЙ ПОВЕРЕННЫЙ
А. С. ФРЕНКЕЛЬ**
Переѣхалъ на Соломацкую ули-
цу, въ домъ К. Меликова.

ВЪ РЕДАКЦИИ ГАЗЕТЫ „МШАКЪ“
продаются слѣдующія нѣмецкія брошюры:
Die Oekonomische Lage der Armenier
in der Türkei. von Dr. GRIGOR ARZRU-
NI. Uebersetzt von A. Amiranjan. Preis
25 kop.
Die Hungersnoth in Türkisch-Armenien
von Dr. GRIGOR ARZRUNI. Uebersetzt von
A. Amiranjan. Preis 20 kop.

**ԹԷՅ ՍԻՐՈՂՆԵՐԸ ԵՒ ՃԱ-
ՆԱԶՈՂՆԵՐԸ** պէտք է գնեն **ԱՆ-
ԳԼԻԱԿԱՆ ԽԱՆՈՒԹԻ** մէջ թէ՛ յ
լաւ տեսակի ֆունտը 1 ռ. 20 կ. և 2 ռ.
և համեմատեան առաջինը 1 ռ. 60 կ. հետ
և երկրորդը 3 ռ. հետ ամեն տեղ **ԹԻՖ-
ԼԻՍՈՒՄ**, որպէս զի իմանան Անգլիա-
կան խանութի մէջ ծախվող ամեն տեսակ
թէ՛ յի համեմատական **ԳԵՐԱԶԱՆ-
ՑՈՒԹԻՒՆԸ**: Բացի այդ Անգլիական
խանութը կը առնէ **ՄԱՔՈՒՐ** թէ՛ յ
առանց **ԹՂԹԻ** և **ԱՐՃՃԻ**.
41—100

**ՀԱՒԱԲԱՐՈՒ Ս. ՄԱՐԻԱ-
ՄԵԱՆ ՕՐԻՈՐԴԱՅ ԳՊՐՈՑԻ**
վարչութիւնը պատիւ ունի յայտնել
յարգող հասարակութեանը, որ օ-
գոստոսի 20-ից դպրոցը **ԸՆԴՈՒ-
ՆՈՒՄ Է ԱՇԿԵՐՏՈՒՀԻ-
ՆԵՐ** ամեն օր, առաւօտեան ժամի
8—12-ը: Հասցեն՝ Լազարևսկի փո-
ղոց, տուն պ. Միկիթ-Շահապարեանցի:
5—5

ՎԵՐԱԿՈՒՆԵՐ 4 ռ., ծրծրներ 1 ռ.,
ծալվող աթոռներ 1 ռ. 50 կ., ՓԱՅՏ-ԱԹՈՒ
4 ռ., ԲԱԶԱԹՈՒՄ-ՄԱՀԱԿԱԿԱԼ 10 ռուբլ և
աւելի, թէ՛ յի բաժակներ 25 և 30 կ., մի
աման քորոցներ 50 կ., պատկաւ ծխողների
համար 60 կ. ֆունտը, անգլիական ՎԱՆԱ-
ՆԵՐ և այլն ծախվում են **ԱՆԳԼԻԱԿԱՆ
ԽԱՆՈՒԹԻ ՄԷԶ**:
10,000 զոյգ գուլբաններ 25 կ.—ից զոյգը,
10,000 զոյգ կանանց ԳՈՒԼԲԱՆՆԵՐ 30 կ.—
1 ռ., 7,000 մատուցարաններ 5 կ.—5 ռ.,
1,000 ՄԱՀԱԿԱԿԱՆՆԵՐ 5 ռ.—35 ռ., 400
արշին բոմաղէյ. 1 ռ.—1 ռ. 30 կ., պա-
րուսինա 40 կ.—1 ռ., 300 հատ ընկալիկ
4 ռ.—35 ռ., 700 ալբոմ ԿԵՍԱԳԵՆՈՎ, 10,000
ֆունտ թէ՛ յ թէ՛ ՍԱՍՆՈՎ 1 ռ. 65 կ.: եր-
կաթէ գրիչներ իւրաքանչիւր ձեռքի հա-
մար: Ծախվում են **ԱՆԳԼԻԱԿԱՆ
ԽԱՆՈՒԹԻ** մէջ:
38—100